Մայիս 28–ին ամբողջ ճակատի վրա, Թիւրքերը նահանջում էին անկարգ։ Մեր սպայակոյտի այդ օրւայ հաղորդագրութիւնը ասում է այդ մասին. «Թիւրքերը երեք օրւայ կռիւներից յետոյ, ջարդւած են և նահանջում են հապճեպով։ Նրանց զօրամասերը բաժանւած են երեք խմբերի։ Առաջինը՝ Ալազեոզ կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղրմզլու և երրորդը՝ Աղջա–Կալա։ Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց։ Ոգեւորութիւնը աներեւակայելի է»։

Եւ, իրօք, ոգեւորութիւնը շատ մեծ էր։ Զօր. Սիլիկեանն այլեւս մտածում էր աւելի լայն գործողութիւնների մասին — շարժւել դէպի Ալեքսանդրապոլ։ Իր մտքում նա օրօրում էր ուրիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր յայտնում. մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը և յարձակւել Կարսի վրա։ Եւ համոզւած էր, որ կը գրաւէ Կարսը, իսկ Կարսի գրաւումով անխուսափելիօրէն կը գրաւէր և Ալեքսանդրապոլը. Թիկունքից կտրւած Թիւրքերը չէին մնայ Շիրակում։

Սարդարապատի յաղթութեան յաջորդ օրը, մայիս 29–ին, զօր. Սիլիկեանը, դիմեց հայ ժողովրդին հետեւեալ կոչով.

«Հայե՛ր։ Մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը շարունակւում է, և Թիւրք զօրքերը նահանջում են։

Մենք պէտք է յետ առնենք Ալեքսանդրապոլը, որը այնպէս նենգօրէն գրաւեցին Թիւրքերը։

Մեր բոլորիս մտքերը ամբողջովին պէտք է սեւեռած լինեն դէպի Ալեքսանդրապոլը. մենք պէտք է յետ առնենք այն և ապա միայն Թիւրքերի հետ բանակցութեան մէջ մտնենք հաշտութիւն կնքելու համար։

Մեզ բոլորիս շատ լաւ պէտք է յայտնի լինի, թէ որ աստիճանի գրգռւել է անկուշտ և միաժամանակ թոյլ Թիւրք կառավարութեան ախորժակը։ Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գաւառները՝ Էջմիածին վանքի հետ միասին և Երեւանի, Նախիջեւանի գաւառների մեծ մասը։

Միթէ՞ մենք պէտք է տանենք այդպիսի անարգանք։ Միտէ՞ հեշտ ու հանգիստ սրտով պէտք է տանք թշնամուն մեր հայրենի հողերը, որ կերակրել, կերակրում են և պիտի կերակրեն մեզ, և մեր սրբատեղին՝ Սուրբ Էջմիածինը։

Ո՛չ, երբեք, հա՛յ ժողովուրդ, դու չպիտի թոյլ տաս այդպիսի անարգանք։

Եւ այդ անարգանքը տեղի չի ունենայ, եթէ մենք հասնենք մինչեւ Ալեքսանդրապոլ։

Քի՛չ է մնացել մինչև Ալեքսանդրապոլ. հարկաւոր է միայն օգնել խրամատներում դտնւող մեր քաջերին, և մի երեք–չորս օրից յետոյ մենք կը հասնենք մեր նպատակին։

Արդ, ուրեմն, մի՛ դանդաղէք, հայե՛ր. շտապով խմբւեցէք խիտ ու համերաշխ շարքերով, վռնտեցէ՛ք թշնամուն մեր հայրենի արիւնաներկ հողից, և թո՛ղ ձեզ հետ լինի ձեր յետնորդների օրհնութիւնը։

Դէպի՛ զէնք բոլորդ։

Դէպի՛ Ալեքսանդրապոլ»։